



40. ԱՆՋԳԱՄ ՀԱՐՍԸ

Կըլնի շիւնի մի բեզրգյան. էդ բեզրգյանը պսակված կըլնի,
մին էլ մի խեղճ պառավ մեր կունենա:

Ամեն տարի էդ բեզրգյանը էթում էր ուրիշ երկիր ապրանքի:
Օրենը մի օր էլի թաղարեք կտենա, որ էթա ապրանքի, կկան-
չի կնկանը դրադ, կասի.

— Տե՛ս, այ կնիկ, մերս պառավել ա, մեղք ա, լավ կպահես
ընչանք իմ գալը:

Կնիկը կասի.— Քա՛, բա ի՞նչ կանեմ՝ լավ շեմ պահի, բա՛
չանս էլ չի դուա գա, ինչի իմ մերը ո՛րն ա, քունը ո՛րն ա, ա՛յ
մարդ. դու էդ ի՞նչ ես թամբահ անում, էն խեղճ պառավը ինձ ի՞նչ
ա անում, որ ես նրան լավ չպահեմ:

Ըդենց մարգին կարխայինացնի, ճամփու կդնի:

Անց կկենա մի օր, էրկու օր, մախլասի՝ մի շաբաթ: Մի օր
հարսը մի խախալ ձու կբերի, կեսոր թևից կբռնի կտանի իրանց
գոմը, փեյինը կիտած կընի դրադ տեղ, էդ ձվանները քոմմա պո-
լոլիկ կշարի, կեսորը կտանի վրեն ուսուլով կնստացնի կասի.

— Ֆողեմ գլո՛ւխդ, զուր մուֆթա հաց ուտող ես, սաղ օրը
պարապ-սարապ հենց ուտելու ես դոչադ, ըսկի անելուն աչք շես
դնում. էս փեյնի վրա էլա նստի ձվերի վրա, հաղիք ճուտեր կհա-
նես՝ քու կերած հացի գինն էլա դուա կգա:

Խնդն պառավն ա՛ գառը-տխուր աղի արտասունք թափելով
կնիլնի փեյնի գլուխը, ուսուլով կնստի ձվերի վրա:

Հարսն էլ աստու իրան օրը մի ճոթ շոր հաց, մի կոտրած բոն-
ձով շուր կբերի, կտա պառավ կեսորը:

Ըսենց անց կկենա մի օր, էրկու օր, մի շաբաթ, էրկու շաբաթ,
մախլասի՝ իրեք շաբաթ. մի օր պառավը կտենա, ըհը՝ հրես ճո-
տերը քոմմա տակին խլվլում են՝:

1 Ձեռագիրն այստեղ ընդհատվում է (Մ. Կ.):



